

Մամլոյ հաղորդագրութիւն
Քեսապի վրայ յարձակումին վերաբերեալ

Հինգերորդ օրը յաջորդաբար, ծայրայեղական ճիհաստի խմբակցութիւններէն "Անֆալ"-ի ասպատակները, որոնք մուտք գործեցին Քեսապ և իր շրջակայքը Թուրքիոյ հողերէն, կը շարունակեն իրենց յարձակումները քաղաքացիներուն վրայ, օգտուելով առաջադրուած նիւթատեխնիկական աջակցութիւնէն և կրակի ծածկոյթէն թրքական ուժերուն կողմէ, խախտելով յստակօրէն միջազգային կանոնը և ՄԱԿ-ի պայմանագիրը: Թուրքիոյ յայտարարուած և բացայայտ միջամտութիւնը Սուրիոյ ներքին հարցերուն, պիտի աւելցնէ իրավիճակին բարդացումը և պիտի պատճառէ յաւելեալ հեղում Սուրիացիներուն արիւններուն, կործանում ենթակառոյցներուն ու սպրուստի աղբիւրներուն: Ժողովրդավարական Փոփոխութեան Ուժերու Ազգային Համակարգող Մարմինը կը դատապարտէ խստօրէն Թուրքիոյ և այլ պետութիւններուն միջամտութիւնը Սուրիոյ ներքին հարցերուն և կոչ կ'ուղղէ հետաքննութիւն կատարելու Սուրիական օդանաւին Թուրքիոյ կողմէ վառ առնելու հանգամանքներուն շուրջ:

Սուրիացիները պէտք ունին բռնութիւնը դադրեցնելու օգնութեան և ոչ թէ աշխատիլ բոցավառելու: Հետեւաբար, Համակարգող Մարմինը կոչ կ'ուղղէ Թուրքիոյ և այլ պետութիւններուն որոնք ներգրաւուած են Սուրիոյ ներքին հակամարտութիւններուն, օգնել դադրեցնելու բռնութիւնը փոխարէն բոցավառելու Սուրիացիներուն միջեւ, ինչպէս նաև Համակարգող Մարմինը կը պահանջէ դադրեցնել զինուորական աջակցութիւնը հակամարտութեան երկու կողմերուն, և կոչ կ'ուղղէ դուրս հանելու Սուրիոյ հողերէն բոլոր օտար պատերազմողները, Ապահովութեան խորհուրդի կողմէ հրապարակուած բանաձեւի միջոցով, որը կը դնէ իրենց միջազգային օրինականութիւնէն դուրս:

Ազգային Համակարգող Մարմնի տեղեկատուական գրասենեակը

Դամասկոս 25/03/2014